

ԱՂԱՎՆԱԶՈՐ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արամ Միքայելյան

Հեռախոս՝ +374.93827468

Բնակչություն՝ 2096

Վայոց ձոր մարզի Աղավնաձոր գյուղը գտնվում է Արփա գետի միջին հոսանքից հյուսիս տարածված Աղավնաձորի սարահարթ կոչվող տարածքի հյուսիս -արևելքում՝ Աղավնաձոր գետից արևելք : Գյուղն ունի 545 առկա տնտեսություն՝ 2062 բնակչությամբ: Համայնքի վարչական տարածքը 4682 հա է՝ 466 հա վարելահողեր են, 1071 հա արոտավայր, 379.4 հա այգիներ: Գյուղի հյուսիսային մասում իր գեղեցկությամբ աչքի է ընկնում Թեքսարի լեռնաճյուղերից Ուլգյուր գագաթը, որը ծովի մակարդակից ունի 2690 մ բարձրություն: Գյուղն ունի հաճելի համայնապատկեր: Բարձրությունը ծովի մակարդակից 1450-1600 մ է, իսկ կենտոնական մասում ունի 1530մ բարձրություն :

Աղավնաձորի սարավանդն ունի հնագույն հրաբխային կառուցվածք և կտրտված է բազմաթիվ փոքրիկ գետակներով ու ձորակներով: Կլիման արտահայտված է մերձարևադարձային չոր կլիմային բնորոշ բնութագրով, այն է՝ չոր և շոգ ամառներով և խոնավ, չափավոր ցուրտ ձմեռներով: Տեղումների քանակը տատանվում է 350-400 մմ: Առավելագույն տեղումներ դիտվում է գարնանը՝ մայիս ամսին, որը խթանում է լեռնալանջերի ձյան հալոցքը և առաջացնում է սելավներ: Աշունն երկարատև է և տաք, որի պայմաններում հասունանում են մրգերը, հատկապես <<Արենի>> տեսակի խաղողը: Այսպիսի բազմաբնույթ կլիմայի պայմաններում ձևավորվել է յուրօրինակ բուսական և կեն- դանական աշխարհ. հատկապես աչքի է ընկնում դեղաբույսերով՝ ուղտափուշ, ուրց, գազ, մասուր, հազարատերևուկ, դանթափար, երիցուկ և այլն: Կենդանական աշխարհը հարուստ է թռչուններով՝ կաքավ, լոր, արծիվ, սողուններով՝ թունավոր օձեր՝ գյուրգա, իժ, ինչպես նաև գի- շատիչներով՝ աղվես, գայլ, շնագայլ,արջ:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է, հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ: Արևային օրերը՝ արևափայլը, մինչև 340-350 օր է կազմում, որով էլ պայմանավորված է արտադրված գյուղատնտեսական ապրանքների՝ պտղատեսակների և բանջարեղենի, բարձր որակը: Խորհրդային տարիներին գյուղում եղել է կաթնապրանքային ֆերմա, նաև ոչխարաբուծական ֆերմաներ, ներկայումս էլ խնամվում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Գյուղում այժմ գոյություն ունեն մի քանի ֆերմերային տնտեսություններ, որոնք զբաղվում են անասնապահությամբ և խաղողագործությամբ, ինչպես նաև՝ մեղվաբուծությամբ:

Արտադրվում է գինի, օղի, չիր, պանիր, բուրդ, միս, մեղր և այլն: Գյուղում գործում է խաղողի վերամշակման երկու ձեռնարկություն, արտադրում և արտահանում է <<Լուսարև>>, <<Գեղեղն>>, <<Հարսնասար>> տեսակի որակյալ գինիներ: Գյուղի հիմնադրումը վերագրվում է 13-րդ դարի սկզբներին: Աղավնաձորը կոչվել է նաև Աղնաձոր, Այնագուր: Հին գյուղը գտնվելիս է եղել այժմյան գյուղի կենտրոնական հատվածում:

Երկրորդ բնակեցումը եղել է 1828թ-ին: Բնակչությունը ներգաղթել է ռուս-պարսկական պատերազմի տարիներին Պարսկաստանից, հիմնականում Խոյ, Մալմաստ, , Վանից Մակուից , Սասունից, Նախիջևանից: Աղավնաձոր գյուղի շրջակայքում եղել են բնակավայրեր, դրանք են՝ Ապանան, որը գտնվում է գյուղից մոտ 4կմ հյուսիս արևելք, Բաղչաջղը՝ գյուղից մոտ 3կմ հյուսիս արևմուտք, Ղզլաղը, Միրաշը:

Այդ տարածքներում գտնվել են կահ-կարասիներ, խաչքարեր փոքրիկ քանակով, գտնվել են նաև կարասային թաղումների շրջանի մնացորդներ (մ.թ.ա. II):

Գյուղից մոտ 4կմ դեպի հյուսիս գտնվում է Ժամիդուզ կամ Ուլգյուր գյուղատեղը , որտեղ մինչև այժմ կանգուն են մնացել Աստվածածին եկեղեցու պատերը (վերանորոգվել է 2004թ.), որի շրջապատում կա գերեզմանոց, կանգուն խաչքարեր, որոնք մահարձաններ են: Նրանցից մեկը պատկանում է Սարգիս Երեցին:

Գյուղատեղում կա երկու գերեզմանոց, որոնցից փոքրը պատկանում է 10-14-րդ, իսկ մեծը` 15-18-րդ դարերին: Ուլգյուր գյուղում է ծնվել միջնադարի մեծ նկարիչ, ճարտարապետ, քանդակագործ Մումիկը, որի ձեռքի գործն է Նորավանք վանական համալիրը, շատ այլ վանքեր ու մատուռներ, այդ թվում` Ուլգյուր լեռան ստորոտում գտնվող սբ. Աստվածածին եկեղեցին: Գյուղատեղի գերեզմանատանը պահպանվում է Մումիկի որդու` Ասկանդրի խաչքարը: Իսկ Աստվածածին եկեղեցու բակում գտնվել է Մումիկի մոր և քրոջ գերեզմանները:

Գյուղի կենտրոնում գտնվում է սուրբ Մարիամ եկեղեցին, իսկ շրջակայքում բազմաթիվ խաչքարեր և մատուռներ:

Գյուղն ունի զարգանալու մեծ հնարավորություններ, ինչի համար կարևոր նշանակություն կունենա պատմամշակութային և էկո տուրիզմի զարգացումը:

Գյուղում գործում են մեկ միջնակարգ դպրոց` երկու մասնաշենքով, մանկապարտեզ, արվեստի դպրոց, բուժկետ, մշակույթի տուն, կապի հանգույց: